մութիւն» աշխատութեան մէջ, «զոր յունաց առեալ տայ մեզ հունքեարն որ Սուլթան Սուլէյման*)։

Բացի բուն պոլսաբնակ հայութիւնից, ԺԷ. դարի վերջերը մօտ 50,000 հոգի էլ դրսից եկած հայեր կային Պոլսում։ Այս երկու խմբերը սիրով չէին պպրում, «քանզի ի ժողովրդականացն՝ որք ընիկ բնական տեղացիք էին ի քաղաքէն Կոստանդնուպոլսէ, բարձրամիտ, բարձրաձայն պատճառօք հարստահարեալ թեւս ածէին ի վերա եկամուտ ժողովրդոյն, եւ իբրեւ զդուեհիկ եւ չմարդի ունէին զնոսա»**)։

Բայց այս երկպառակութիւնները դեռ բաւական չէին. ԺԷ. դարի վերջին քառորդին եւ ԺԸ. դարի առաջին տարիները հայ հասարակութեան կեանքը է՛լ աւելի բարդացաւ։ Կաթոլիկութեան թափանցման երկրորդ շրջանը հայոց մէջ (առաջին շրջանը փակուեց Լեւոն Զ.ի մահով), որ սկսուեց ԺԶ. դարի վերջերին, ընկերզում անցնում էր բաւական խաղաղ, որովհետեւ կաթոլիկ միսիոնարները, որ ողողել էին Հայաստանն ու դաղութները, շատ զուսպ էին պահում եւ բարեկամ էին ցոյց տալիս իրենց հայոց եկեղեցու վերաբերմամբ։ Միսիոնարները հաղնում էին հայ վարդապետների զգեստներ, ժամասացութիւն էին անում հայոց եկեղեցիներում, դասաւանդում էին հայկական դպրանոցներում եւ այդպիսով դրաւում էին հայ հոգեւորականութեան համակրանքը։ Յետոյ, երբ միսիոնարներն ու Հռոմը այլեւս համարում էին նպատակին հասած, կտրուկ կերպով փոխեցին իրենց վերաբերումը դէպի հայոց եկեղեցին։ Հայոց եկեղեցին դարձաւ հերձուածող, եւ նրա հերետիկոսութիւնը՝ շատ պարզ. նրանք դուրս եկան հայոց եկեղեցու դէմ թէ՛ գրականութեան մէջ եւ թէ՛ կեանքում։

Միսիոնարները հարց դրին, որ իրենց կողմնակիցները հայոց եկեղեցիները չայցելեն, չմասնակցին հայոց հերետիկոս եկեղեցու խորհուրդներին։ Այս պահանջը առաջ բերեց դործնական մեծ կարեւորութիւն ունեցող մի խնդիր։

Պոլսի դրաւումից անմիջապէս յետոյ, Մահմէտ Բ., որ բաւական խոշոր թուով հայեր էր տեղափոխել նորանուաճ քաղաքը, Պոլսի հայոց առաջին պատրիարք Յովակիմի անունով մի խաթթը չէրիֆ հրատարակեց, որով նրա վրայ եւս տարածում էր յունաց պատրիարքի վայելած իրաւունքներն ու արտօնութիւնները. պատրիարքին էր յանձնւում ամբողջապէս քաղաքացիական իշխանութիւնը Պոլսի եւ դաւառների հայութեան վրայ, հայ ազդարնակութեան հաշուառումը եւ հարկերի ու տուրքերի դանձումը ազդային ու եկեղեցական հիմնարկութիւնների օգտին, ինչպէս նաեւ ընդհանուր վերահսկողութիւնը պետական տուրքերի հաւաքման վրայ։ Այսպիսով, ամէն մի հայ, որ խուսափում էր հայ ազդային եկեղեցու հետ հաղորդակցութիւն ունենալուց, դուրս էր ընկնում հաշուառումից ու հարկատուութիւնից ի վնաս պետութեան եւ հայ համայնքի։ Պէտք է աւելացնել նաեւ, որ հայ համայնքից դուրս եկողներն ու կաթոլիկութեան յարող հայերը, համարեա մեքենայօրէն մի միսիոնարի միջոցով մտնում էին ֆրանսական դեսպանի հովանաւորութեան տակ եւ սկսում էին օգտուել հետզհետէ ոյժ առնող «առանձնաշնորհումներից»։ Դժուար չէ երեւակայել, թէ հայերը, մանաւանդ հարուստները, ինչպիսի թեթեւութեամբ եւ ինչ քանակով էին դառնում կաթոլիկ։

Հասկանալի է, որ այս երեւոյթը իր վրայ էր դրաւում է՛ւ պատրիարքարանի է՛ւ Թուրք կառավարութեան ուշադրութիւնը եւ այս վերջինս, պատրիարքարանի ճնշման տակ, խիստ միջոցներ ձեռք առաւ բացայայտ կերպով կաթոլիկութիւն ընդունող հայերի դէմ։

Բացի ազդարնակութեան այս մասին, որ ձգտում էր կաթոլիկութեան եւ մասնակցում էր դործօն պայքարի մէջ, կար եւ մի ուրիշ խումբ, որ կապը չէր խզում ազդային եկեղեցու հետ, բայց շատ մօտ էր կաթոլիկ միսիոնարներին, որովհետեւ մեծ սէր ունէր ուսման, որ անկարող էր ստանալ հայ հոգեւորականներից եւ որոնում էր կաթոլիկ միսիոնարների մօտ։ Սրանք անհամեմատ աւելի էին զդացած, լայնօրէն տեղեակ էին կրօնական հարցերին, մի-

*) Երեմիա Չելէպի, Ստամպոլոյ Պատմութիւն, Վիեննա, 1913, էջ 7։

**) Առաքելդաւրիժեցի, Պատմութիւն, երրորդ տպ. էջ 234։